30 ապրիլ 2024թ.

«Ֆասթ բանկ» ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, մասնավորապես՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողական կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության վստահելիության և համապատասխանության համար,
- Հիմնավորված հաշվարկներ և գնահատումներ անելու համար,
- ՖՀՄՍ պահանջների պահպանման, իսկ ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներից շեղումների դեպքում՝ կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
- Ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատությունն ապահովելու մտադրության հիման վրա պատրաստելու համար,
- Հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման և կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում միջոցներ ձեռնարկելու համար,
- Բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտություն ապահովող ՀՀ օրենսդրությանը և ՖՀՄՍ-ներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
- Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար:

2023թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են բանկի ղեկավարության կողմից 2024թ.-ի ապրիլի 22-ին:

Գործադիր տնօրեն -
տնօրինության նախագահ — Գարեգին Դարբինյան

Գլխավոր հաշվապահ — Թաթուլ Թամրազյան